

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1975, ք. 1-2, էջ 224-227)

ՈՂԲ ԻԶ.

Քրնար մ'ունիմ, լարերն հաղար թախծութիւն,
իմ սիրտս է որ արցունք արցունք կը հոսի.
Ձերդ գաղջ մըշուշ որ կը փարի աչքերուն,
Թըշուռութիւնն ինձ հետ աշխարհ կը չըջի:

Ապիկար եմ, ես մերկացայ գանձերէն,
Կարօտ եմ արդ արքունական օրերուն.
Վերաւոր եմ, Տէ՛ր, ես մեղքի սըլաքէն,
Կը լըսեմ խուլ ձայնը մահուան քայլերուն:

Մունկերս գետին, դէմքըս հողին խոնարհած,
Յիսուսի Մայր, կը պաղատիմ քեզ սրտով.
Ասիերուս մէջ քաղցրաբոյր խո'ւնկը վառած,
Քեզ կը ձօնեմ խառն աղօթքի միւռոնով:

Ես հիւսեցի քերթուած մեղքի փունջերով,
Շընորհքն եղաւ ինձ արտասուք քաւութեան.
Լըքուած եմ արդ եւ վարանած հոգերով,
Ես ինծի դէմ պայքար ունիմ հոգեկան:

Թող օրհնուի այն ձեռքը որ յօրինեց
Մատեանն այս սուրբ՝ իմաստութեան երգերով.
Գլխուն դընեն աննիւթ պըսակ, Լոյսն անեղծ.
Փառքերու մէջ հանգչի արդարն անունով:

11. 12. 1972

ՈՂԲ ԻԷ.

Բանաստեղծութեան երգերն ողբական
Սրտի զղջում են, հառաչ, հեծութիւն.
Նոյն պաղատանքն է համայն մարդկութեան,
Լոյսի նոյն փափաք տենչերու թաքուն:

Տէ՛ր, դուն ես բարի, ես չար մեղաւոր,
Մեղայ՝ ճառագայթ, խաւարըս մեղայ.
Արեանդ դէմ մեղայ, լոյսիդ դէմ մեղայ,
Անհաս գըլթութեանդ սիրոյ դէմ մեղայ:

Գիտեմ թէ երկնի կամուրջ է Մեղան,
Որ դիս կը տանի անհուն երկինքներ.
Կոչեցին սուրբեր խորան սրբութեան,
Փառքն է Աստուծոյ անհաս մեծութեան:

Մեղայ վերըստին, ապերախտ եմ ես,
Մարմինս ոճրագործ՝ հողիս ըսպանեց.
Չարաչար մահուան ճամբան բացի ես,
Աշխարհներ կ'անցնիմ մանուկ օրերէս:

Դեռ կան սրտիս շուրջ փուշեր մեծամեծ,
Դեռ լոյսը դէմքիս, լոկ երեւոյթ է.
Ունայն պարծանքներ ինձ եղան հանդերձ,
Գիտցէք դուք մարդիկ՝ որ կեանքն երազ է:

Քրիստոս թագաւոր, դուն կրնաս մահուան
Խայթոցը բուժել, դուն կեանք ես, դու՝ Սէր.
Կ'ողբամ՝ թէ առնես զիս ոտքի կոխան,
Թէ ներողութեան աչքեր չեմ տեսներ:

Դէմքդ ե՞րբ հոգւոյս մէջ պիտի նըկարուի.
Ե՞րբ սուրբ կերպարանքդ պիտ'առնեմ կրկին.
Շող մը շընորհքի կը բաւէ ինծի,
Ախտերս լըլալու, դառնալու քեզի:

15. 12. 1972

ՈՂԲ ԻԸ.

Այլ ի՞նչ ըսեմ. ինչե՞ր յայտնեմ աշխարհի,
 Ի՞նչպէս սրտիս խոստովանիմ գաղտնիքներ.
 Հետքերուս մէջ կեանքի փոշին լեցուցի,
 Կը սարսափիմ ապագայէն մթաստուեր:

Իմ ձեռքերովս շօշափեցի չարին ծառն,
 Պատուէր տըւին սիրել բարին հաւատքով.
 Ո՛վ մարդ, ըսին, ախտերուն մի՛ մերձենար,
 Մի՛ թողուր որ հոգիդ խոցեն մեղքերով:

Չունիմ հիմա իմաստութեան պատմութեան,
 Ոչ կուտութեան անկարան քօղն ըսպիտակ.
 Շրթունքներուս թրթրոացումն է ունայն,
 Ես ճամբորդ եմ մահուան տըխուր շուքին տակ:

Կարող ես, Տէ՛ր մատիդ ծայրովը ջնջել,
 Որքան յանցանքն ըլլայ նրման ամպերու.
 Չեմ կրնար ես իբրեւ մարդ բիծ մը սրբել,
 Փակեցի սիրտս որ դաս ձեռքովդ բանալու:

Կը հաւատամ մարդարէին խօսքերուն.
 Մըտէ՛ք, ըսաւ, գըթութեան դուռն է Աստուած.
 Այո՛, ո՛վ Տէր, դու մեզ կու տաս քաղցրութիւն,
 Երբ կը խօսիս՝ ո՛վ չի լըսեր երկիւղած:

Լոյսէն արագ դուռն կը հասնիս ամէն տեղ,
 Ոչ ոք քեզի կրնայ ըլլալ դիմադիր.
 Զօրաւոր ես, ովկեաններէն ալ ահեղ,
 Ափիդ մէջն են մեր կեանքն, երկիր եւ երկին:

Ով որ այս գի՛րքը խաչիդ տակ ձեռքն ունի,
 Դուռն ողորմէ, Հա՛յր, որ Որդիդ սիրեցիր.
 Վէրք չունենայ, վիշտ չունենայ, չըխամբի,
 Ազատ ըլլայ սաքրանքներէն դաւադիր:

Հա՛յր, քու անունդ սիրոյ կանչ է պաշտելի,
 Բերնի համ է, ահ ու սարսափ դեւերու.
 Անճառ, անբաւ, ամէն սրտէ գովելի,
 Լոյսի աղբիւր, անհունութիւն խոկերու:

Ո՛հ, ի՞նչ աղբիւր Գառինն արեան երկնահոս.
 Որ մէկ շիթով սրբեց աշխարհս համօրէն.
 Նիզակ չէր այն, այլ ճառագայթ, սիրոյ լոյս,
 Որ խորտակեց սատանը մեր աշխարհէն:

19. 12. 1972

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎԱՀԱՆՅԱՆ

ԱՇՈՒՆԻՆ ԱՆԳԻՆ

Այս մարդը, կ'ըսեն, հասաւ իր ձմրան,
 Տերեւաթափի օրերու նրման.
 Ու վաղը թերեւս, թերեւս միւս օր,
 Վար կ'իյնայ վերջին տերեւը բոսոր:

Համրած են ոտքերն հազար ու մէկ քայլ.
 Բայց սիրտը զըւարթ կը դարնէ դարձեալ.
 Քերթուած կը գըրէ, կարծես սիրահար,
 Հաշտ է նա գալիք օրերուն համար:

Կը գըրէ երգեր, ծաղիկի մասին,
 Գարնան կը սպասէ որ վարդեր բացուին.
 Սիրտը լեցուն է, սոխակի նրման,
 Որ երգել կ'ուզէ իր բոյնին վըրան:

Կ'ուզէ երբեմնի բողբոջը սիրոյ.
 Կ'ուզէ որ չըզան մէկ ու երեկոյ.
 Միշտ պայծառ ըլլայ, շուշանի նրման,
 Իր շուրջը պատող աշխարհ ամենայն:

Ան կորաքամակ կ'երթայ դունէ դուռ,
 Ամէնուն համար իր երգն է համբոյր.
 Հողի մէջ ինկած տերեւ մը կ'առնէ,
 Վըրան գըրելու թէ «Աշխարհս այս է»:

Ձմեռ, 1974

ԾԵՌՈՒՇ ԿԱՅ

Մշուշ կայ նաեւ քու թեւերուդ տակ,
Այս ցուրտ օրերուն, թռչնիկ անանուն.
Չունին փետուրներդ դարնան փափկութիւն,
Քաղցըր երգերու դուն չունիս փափաք:

Մշուշ կայ նաեւ քու թեւերուդ տակ,
Ինչպէս տուներու քիւերն են լեցուն.
Պատուհանէս դուրս կայ ուկեան մ'անհուն,
Առանց ալիքի, փրփուրի ճերմակ:

Աչքերուդ մէջ կայ լոյսի թանձր դոյն,
Դուն ալ մեղի պէս կուրծքի ցաւ ունիս.
Պատուհանիս տակ ինծի կը նայիս,
Երբ քեզ կ'երկարեմ ձեռքի դըթութիւն:

Ինչո՞ւ խոյս կու տաս օդին մէջ սառած,
Ինչո՞ւ կ'երազես փշրանք մը հացի.
Արցունքըս կու տամ ջուրի տեղ քեզի,
Նշխար սեղանէս՝ բարութեամբ շաղուած:

Դուրսը մշուշ կայ, ամպ ամպի վըրան,
Կը դողայ նոճին սարսըռանքով լի.
Կը խորհիմ աղքատն երբ մերկ կը չըջի,
Դուրսը մըշուշ կայ, սառած ամէն բան:

Զմեռ, 1974

ԱՆԱՐԱՏ ԾԱՂԻԿ

Մի՛ փնտեր, չըկայ մեղաւոր ծաղիկ,
Արեան կաթիլով չի ծընիր շուշան.
Անմեղութեան պէս վարդն է դեղեցիկ,
Մարդկային սիրտն է մարդուն պարտական:

Ծաղկավաճառէն դու փունջ մի՛ դըներ.
Ներկուած են անոնք, կեղծ շրթունքի պէս.
Պարզութիւն սիրէ, դաշտի ծաղիկներ,
Թէ կեանքիդ վըրան քիչ մ'արեւ կ'ուզես:

Մի՛ նետեր ծաղիկ ոտքերու կոխան,
Սէրը չեն առներ անարդ սրբութիւն.
Նըման են անոնք առաքինութեան,
Որ սրտերուն մէջ կը բացուին միայն:

Մի՛ սըփուեր ծաղիկ մեռելի վըրան,
Չեն փոխուիր աղօթք, հրեշտակ երկնքի.
Ծաղիկն հաճոյքի պատրանք է միայն,
Գուցէ հին օրուայ երազանք փոխուի:

Մի՛ փետտեր ծաղիկ՝ իրեւ երիցուկ,
Բախտի դուշակ չէ, կարմիր կամ դեղին.
Ոսկի փայլ ունի, հըմայք խուսափուկ,
Քանի դեռ մարդ ենք, հըպատակ սրտին:

8 Փետր. 1974

ԾԱՌՈՒՇ ՊԱՏԾԱՌՈՒԹԻՒՆԸ

Անտառէն բերին
Քաղաքին պարտէզն,
Երբ մատղաշ էր դեռ,
Երբ կանանչ էր դեռ,
Ծաղիկ չէր բանար
Միայն կը ժպտէր:

Զով ջուրը կու գար
Խոխոջը բերնին.
Ամէն մէկ արմատ
Անոյշ է, կ'ըսէր,
Մօր կաթի նըման:

Արմատներն հողով
Փափուկ պատեցին,
Կարծես թէ փոքրիկն
Օրօրան դըրին.
Արեւուն ըսին՝
Դու մայրիկ եղիր,
Լուսընկայ, դուն ալ՝
Գիշերուան պահակ:

Ու ծառը մեծցաւ,
Բարի էր ինչպէս
Մեր Աւետարանն.
Բոյն տըւաւ փոքրիկ
Անթեւ թռչներուն,
Ու փեթակ բացաւ
Մեղրածին մեղուն.
Աղքատին լոյս,
Մեղրէն առ ու կեր:

Երբոր պարտիզպանն
Առուն կը դարձնէր
Հարուածով բահին,

Ծառն հասակ առաւ,
Տարածեց թերեւն
Երկընքէ երկին:

Բըռունցքը բացաւ
Կայծակներուն դէմ,
Ու սեւ ամպերէն
Պաշտպանեց մարդիկ:

Ամէն նոր դարնան,
Իր դէմքն աղուոր էր,
Կը ծաղկէր ինչպէս
Հարսնուկ մայրացած,
Պըտուղներ կու տար,
Աննաման սիրով:
Հեզ ու համբերող
Ինչպէս հին մարդիկ,
Կը հաւաքէր շուրջն
Աղքատն անտէրունջ,
Տուն ու տանիք էր
Ամէնուն համար:

Եւ օր մ'ալ ըզգաց,
Զըմեռ ատեն էր,
Արմատներու դող,
Ճիւղերու սարսուռ,
Սրտի յոգնութիւն.
Հուժկու թոքերուն
Շունչը կը պակսէր,
Հազար աչք ունէր
Հազարն ալ պղտոր:

Ա՛խ, ուսկի՞ց մըտան
Իր կողերուն մէջ
Որդեր դաղրելի,
Գիշակեր թռչուն
Եւ բուն մահաճայն:
Բըզըքտեցին ծառն,
Եւ արիւնի տեղ՝
Թարախ հոսեցաւ:

Մեռնելու մօտ էր
Ու հեւք կը պակսէր.
Հողին գիրկն ինկաւ,
Պահէ զիս, խնդրեց.
Կը վախէր կրակէն,
Ինչպէս կը դողանք
Դըժոխքի բոցէն:

Բայց տարին օճախն
Իրբեւ փայտ անարդ,
Եւ ան բոց տըւաւ,
Շողեր արձակեց.
Իր մանուկ օրերն
Անդամ մ'ալ յիշեց:

25. 2. 1975

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊՈԵՄՆԵՐ

Հրտ.
Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ. 1972, էջ 452,
ուրաժալ, լաթակազմ: Գինը 1 ռ. 83 կ.:

Բաղմավաստակ Ասատուր Մնացական-
եան արդէն 1946ին պատրաստած էր այս
արժէքաւոր մենագրութիւնը: Թէ ինչո՞ւ
այսքան ուշացեր է անոր հրատարակու-
թիւնը՝ դժհասցուցիչ կերպով չէ բացա-
տրուած: Արտասահմանի պայմաններով՝
նման յապաղում մը անշուշտ ընդունելի
եւ հասկնալի է, սակայն ոչ՝ Երեւանի
համար:

Էջ 90-ը կը սկսի «Գրիգոր Տղայ»-ի
կենսագրութիւնը, դո՛նէ ինչ որ կարելի
է: Ասատուր Մնացականեան հաւատարմ-
օրէն կը յիշէ ինչ որ հրատարակուած է
իրմէ առաջ՝ Գրիգոր Տղայի մասին. չի
յիշեր միայն «Սալատիմ, Գրիգոր Տղայ
եւ Լեւոն Ա.» մեր երկար յօդուածը՝
ըստ տեսած ՎիՄի մէջ, Փարիզ, 1938ին,
Յունուար-Մայիս, էջ 84-96: ՎիՄի մէջ
հրատարակած մեր ուսումնասիրութիւնը
աւելի ճշմարտացի է եւ ընդլայնած նոր
քննութիւններով՝ հրատարակեցինք այս
էջերուն մէջ (Բաղմ. 1975, թ. 1-2, էջ
160-180):

Մնացականեան մեր հազուադէպ աշ-
խատանքներէն է, որ կը ցանկայ հաւա-
տարիմ ըլլալ իր նիւթին, եւ խզմտօրէն
կ'ուզէ ներկայացնել ինչ որ կ'ուսումն-
ասիրէ: Այդ իսկ պատճառով երբեմն ե-
ղած սխալները անմեկնելի են: Էջ 15,
կը խօսի ինչ որ «Հ. Պ. Քիպարեան»-ի մը
մասին, որ հրատարակած է «Պատմու-

թիւն Հայ Գրականութեան, Վենետիկ,
1944»: Խօսքը անտարակոյս Հայր Կիւրեղ
վարդապետ Քիպարեանի՝ բաղմավաս-
տակ եւ ծերունազարդ անխնջ Վենետի-
կեան Մխիթարեանի մասին է, որ հե-
ղինակն է «Պատմութիւն Հին Հայ Գրա-
կանութեան» արժէքաւոր հատորին:

Յաւալիօրէն նոր բան չ'աւելնար Գրի-
գոր Տղայի կենսագրութեան արդէն մե-
ղի ծանօթ հատուկտոր ծանօթութեանց
վրայ: Խորացուած չէ Միխայէլ Աստրիկի
«Թշնամութիւնը» Գրիգոր Տղայի դէմ:
Ոչ ալ դժհասցուցիչ են Միխայէլ Աստրիկի
Հայոց ներքին կաթողիկոսական ընտրու-
թեանց խառնուելու մասին ըսուածները:
Ընդունելի չէ Մնացականեանի կասկածը
Գրիգոր Տղայի՝ Մլեհի եւ Նուրէդդինի
օգնութեամբ կաթողիկոսութեան տիրա-
նալու մասին. մինչ ոչ մէկ բան կ'ըսէ
Միխայէլի ամբաստանութեան մասին՝
Գրիգոր Տղայի դէմ, «յանուն արծաթա-
սիրութեան»: Ինչպէս ըսինք, մենք ար-
դէն երկար խօսած ենք այդ մասին՝ մեր
նորաւարտ աշխատութեան մէջ: Մնացա-
կանեան չ'ապացուցաներ նաեւ Լեւոն
Մեծագործի եւ Պահլաւունեաց միջեւ
դոյութիւն ունեցած «հալածանքը»: Գրի-
գոր Քարաւէժի նման կրնայ ըլլալ որ
Գրիգոր Տղայ ալ բնական մահուամբ չէ
մեռած:

Մնացականեան, էջ 30ին, արդէն կը
վերջացնէ Գրիգոր Տղայի «կենսագրա-
կան» մասը, եւ կը սկսի ներկայացնել
անոր դրական արտագրութիւնները: Հե-
ղինակը հոս իր գետնին վրայ է, եւ յա-
ջողութեամբ կը կատարէ իր աշխատան-
քը: Արժանի տեղ կու տայ Գրիգոր Տը-
ղայի մեկնաստութեանց, որպէս Մխիթար
Հերացիի «Ձերմանց մխիթարութիւն»,
աշխարհական օրինադիրը (Մովսէսի,
Լեւոնի եւ Կոստանդեայ, ինչպէս նաեւ